ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-36-Ո-33
2026թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՔՐԵԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԲԱԺՆԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳՈՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՁԵՎԻ ՈՒ ԿԱՐԳԻ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳՈՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՅԼ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 100-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, 102-րդ հոդվածի 1-4-րդ մասերով, 103-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, 104-րդ հոդվածի 1-ին մասով, 105-րդ հոդվածի 2-րդ մասով, 105.1-րդ, և 110.1-րդ հոդվածներով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Սահմանել դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով մասնակիցներին առաջադրվող պահանջները, հատուկ կարգով որակավորման գրավոր քննության ձևը, քննական հարցերի կառուցվածքի և բովանդակության նվազագույն պահանջները և գրավոր առաջադրանքների տարբերակների քանակը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սահմանել հատուկ կարգով որակավորման գրավոր քննության հարցերի մշակման կարգը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Սահմանել հատուկ կարգով որակավորման գրավոր քննության կազմակերպման և անցկացման, այդ թվում՝ քննական նյութերի բաշխման, քննության ընթացքի, իրավական կամ այլ փաստաթղթերից, տեխնիկական միջոցներից օգտվելու կարգը՝ համաձայն հավելված 3-ի:

4. Սահմանել հատուկ կարգով որակավորման գրավոր քննության արդյունքներով նվազագույն անցողիկ միավորը, քննական աշխատանքները ստուգելու և գնահատելու կարգը, գնահատման չափորոշիչները և գնահատման սանդղակը՝ համաձայն հավելված 4-ի:

5. Սահմանել հատուկ կարգով որակավորման գրավոր քննության արդյունքների ստուգաթերթի ձևը՝ համաձայն հավելված 5-ի:

6. Սահմանել հատուկ կարգով որակավորման գրավոր քննության բողոքարկման արդյունքների ստուգաթերթի ձևը՝ համաձայն հավելված 6-ի:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ

2026թ. ապրիլի 20
ք. Երևան

Հավելված 1
Բարձրագույն դատական խորհրդի
2026թ. ապրիլի 20-ի թիվ
ԲԴԽ-36-Ո-33 որոշման

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՔՐԵԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԲԱԺՆԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳՈՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ, ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՆՎԱՋԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ

1. Դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու համար որակավորման ստուգմանը հայտ կարող են ներկայացնել 25-ից 60 տարեկան, ընտրական իրավունք ունեցող անձինք, եթե՝

1) ունեն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն.

2) Հայաստանի Հանրապետությունում ստացել են իրավագիտության բակալավրի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ համապատասխան աստիճան են ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որոնց ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով.

3) տիրապետում են հայերենին.

4) ունեն անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներից առնվազն մեկ՝ ստանդարտացված թեստային համակարգերով ստուգվող լեզվական գիտելիքների՝ Բարձրագույն դատական խորհրդի (այսուհետև՝ նաև Խորհուրդ) սահմանած համապատասխան մակարդակի իմացություն.

5) միայն իրավագիտության բակալավրի աստիճան ունենալու կամ օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան ձեռք բերած լինելու դեպքում ունեն առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն, իսկ իրավագիտության բակալավրի և իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճան ունենալու կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան ունենալու կամ օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան ձեռք բերած լինելու դեպքում ունեն առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն.

6) առկա չեն դատավոր նշանակվելու՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 112-րդ հոդվածի 1-ին մասի 1-6-րդ կետերով նախատեսված սահմանափակումները: Դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվել հավակնող անձը (այսուհետ՝ հավակնորդ) որակավորման ստուգմանը մասնակցելու համար Խորհուրդ է ներկայացնում Բարձրագույն դատական խորհրդի սահմանած ձևի հայտ:

2. Հայտին կից ներկայացվում են՝

1) անձը հաստատող փաստաթղթի, նույնականացման քարտի պատճենները և էլեկտրոնային փոստի հասցեն,

2) հինգ գունավոր լուսանկար /3x4 չափի/,

3) կենսագրական տվյալները պարունակող քարտ,

4) նոտարական կարգով հաստատված բանավոր հայտարարություն՝ դատվածության և սնանկության կամ դրանց բացակայության մասին,

5) իրավաբանական կրթության՝ պահանջվող որակավորման աստիճանի առկայությունը հավաստող փաստաթուղթ,

6) հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ (ատեստատ կամ դիպլոմի ներդիր),

7) պահանջվող օտար լեզուների՝ Խորհրդի սահմանած համապատասխան մակարդակին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ (անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներից առնվազն մեկի իմացությունը պետք է բավարարի ստանդարտացված թեստային համակարգերով ստուգվող լեզվական գիտելիքների առնվազն A2 մակարդակը),

8) պահանջվող մասնագիտական աշխատանքի փորձառությունը հավաստող ապացույց, այդ թվում՝ աշխատանքային պարտականությունները հավաստող պաշտոնի անձնագիր կամ այլ փաստաթղթեր,

9) արական սեռի հավակնորդի դեպքում՝ պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու փաստը հավաստող փաստաթուղթ,

10) դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին Կառավարության սահմանած կարգով տրված փաստաթուղթ (տեղեկանքը տրվում է հաշվառման վայրի բժշկական հաստատությունից (բժշկական հանձնաժողովի կազմում պետք է ընդգրկված լինեն թերապևտը կամ ընտանեկան բժիշկը, նյարդաբանը, սրտաբանը, քիթ-կոկորդ-ականջաբանը, ակնաբույժը, ուռուցքաբանը (առկայության դեպքում), ներզատաբանը, հոգեբույժը (առկայության դեպքում)), ինչպես նաև առանձին տեղեկանքներ՝ հոգեբուժական, թմրաբանական և հակատուբերկուլյոզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից,

11) Բարձրագույն դատական խորհրդի սահմանած ձևով համաձայնություն՝ իր վերաբերյալ պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից, հավակնորդին ներկայացվող պահանջների համապատասխանության ստուգման սահմաններում, անհրաժեշտ անձնական տվյալներ, այդ թվում՝ բժշկական գաղտնիք հանդիսացող և այլ տեղեկություններ ստանալու մասին,

12) առավելագույնը երեք երաշխավորագիր-նամակ՝ ըստ հավակնորդի ցանկության,

13) օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարման անդորրագիր,

14) բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ (լրացված հարցաթերթիկի տպված և

ստորագրված տարբերակն անհրաժեշտ է ներկայացնել Դատական դեպարտամենտ, իսկ էլեկտրոնային տարբերակը՝ էլեկտրոնային փոստով ուղարկել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի էլեկտրոնային փոստի հասցեին,

15) գրավոր հայտարարություն՝ հայտում առկա տեղեկությունների և կից ներկայացված փաստաթղթերի հավաստիության մասին,

16) ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից տրված տեղեկանք՝ միայն ՀՀ քաղաքացի հանդիսանալու վերաբերյալ:

3. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 106-րդ հոդվածով սահմանված դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու առանձնահատկությունները չեն տարածվում հատուկ կարգով որակավորման ստուգում անցնելու նպատակով հայտ ներկայացրած անձանց վրա:

4. Դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձինք հատուկ կարգով որակավորման ստուգմանը մասնակցելու համար ներկայացնում են դիմում, «Հայաստանի Հանրապետության Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ և օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարման անդորրագիր:

5. Որակավորման գրավոր քննությունն անցկացվում է քրեական մասնագիտացման ոլորտում գրավոր առաջադրանքների միջոցով, որոնք, բացի տեսական իրավական գիտելիքների ստուգումից, ուղղված են նաև հավակնորդի վերլուծական և իրավակիրառ կարողությունների ստուգմանը:

6. Դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով հատուկ կարգով որակավորման գրավոր ստուգման առաջադրանքները պարունակում են թեստային և իրավական խնդիրներ:

7. Գրավոր առաջադրանքները պարունակում են իրավական խնդիրներ՝ առաջադրված փաստական հանգամանքների նկատմամբ իրավունքի նորմերը վերլուծելու և կիրառելու պահանջով կամ կազմվել թեստային առաջադրանքների՝ հակիրճ իրավական հիպոթետիկ խնդիրների միջոցով՝ դրանց ճիշտ լուծումները հավակնորդի կողմից ընտրելու պահանջով, ինչպես նաև կարող են ներառել հիպոթետիկ գործի ամբողջական փաթեթի ուսումնասիրության հիման վրա՝ դատավարական գործողությունների վերլուծության, դատավարական փաստաթղթերի նախագծման և այլ պահանջներ:

Գրավոր քննությունը կարող է անցկացվել տարբեր օրերի ընթացքում տարբեր առաջադրանքներ ներկայացնելու միջոցով:

8. Դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով հատուկ կարգով որակավորման գրավոր ստուգում անցկացնելու համար կազմվում է քրեական մասնագիտացման թեստերի և իրավական խնդիրների հրապարակման ոչ ենթակա շտեմարան, որտեղ ընդգրկված են 120 թեստային առաջադրանքներ և 16 իրավական խնդիրներ, որոնցից գրավոր քննությանը մասնակցող հավակնորդների համար թղթային եղանակով կազմվում է առաջադրանքի 2 տարբերակ:

9. Քննության թեստային առաջադրանքները պարունակում են 60, որոնցից 30-ը նյութական, 30-ը դատավարական հակիրճ իրավական հիպոթետիկ խնդիրներ և հակիրճ

հարցերի միջոցով՝ դրանց ճիշտ լուծումները հավակնորդի կողմից ընտրելու տարբերակներ, ինչպես նաև իրավական խնդիրների միջոցով՝ առաջադրված փաստական հանգամանքների նկատմամբ իրավունքի նորմերը վերլուծելու և կիրառելու առաջադրանք: Յուրաքանչյուր թեստային առաջադրանքը պարունակելու է մեկ հարց՝ պատասխանի հնարավոր 4 (չորս) տարբերակներով, որոնցից մեկը՝ որոշակիության պայմաններին բավարարող ճիշտ պատասխանն է:

10. Քննության իրավական խնդրի առաջադրանքի տարբերակը պարունակում է 8 (ութ) խնդիր յուրաքանչյուրը 1 (մեկ) հարցադրումով:

11. Քննության իրավական խնդիրները պետք է վերաբերեն տվյալ մասնագիտացման ոլորտում նյութական և դատավարական իրավունքին:

12. Քննության իրավական խնդիրներին առաջադրվող հարցադրումներից յուրաքանչյուրը պետք է հնարավորություն տա ստուգելու հավակնորդի՝

ա. իրավական գիտելիքները համապատասխան մասնագիտացման ոլորտում՝ ներառյալ կիրառելի սահմանադրական նորմերի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտած իրավական դիրքորոշումների իմացությունը և ընկալման մակարդակը,

բ. վերլուծական և մեկնաբանման՝ ներառյալ խնդրի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները վեր հանելու, դրանք կիրառելի իրավական նորմի և ներկայացված դիրքորոշումների հետ համադրելու հմտությունը,

գ. հիմնավորված և պատճառաբանված եզրակացություններ կատարելու կարողությունը,

դ. իրավաբանական գրավոր խոսքը հստակ և տրամաբանված շարադրելու ունակությունը:

13. Քննություն անցկացնելու օրվանից առնվազն 10 օր առաջ Դատական դեպարտամենտը հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակում է գրավոր քննության առաջադրանքների առնվազն մեկ նմուշօրինակ:

14. Քննություն անցկացնելու համար քննության հարցերի մշակումն իրականացվում է Խորհրդի որոշմամբ հաստատված «Դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող հատուկ կարգով որակավորման ստուգման գրավոր քննության հարցերի մշակման կարգ»-ին (Հավելված 2) համապատասխան:

Հավելված 2
Բարձրագույն դատական խորհրդի
2026թ. ապրիլի 20-ի թիվ
ԲԴԽ-36-Ո-33 որոշման

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳՈՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Հատուկ կարգով որակավորման գրավոր քննության (այսուհետ՝ Քննություն) հարցեր մշակելու համար Բարձրագույն դատական խորհուրդն (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ընտրում է համապատասխան մասնագետ (մասնագետներ) կամ մասնագիտացված կազմակերպություն:

2. Խորհրդի կողմից համապատասխան որոշմամբ հարցեր մշակող մասնագետին (մասնագետներին) կամ մասնագիտացված կազմակերպությանը ներկայացվում են պահանջներ, որոնց պետք է համապատասխանեն կազմվող թեստերը:

3. Քննության հարցերը մշակելու համար համապատասխան մասնագետ (մասնագետներ) կամ մասնագիտացված կազմակերպություն ընտրելու վերաբերյալ Խորհրդի որոշումը ենթակա չէ հրապարակման: Ստորագրվելուց հետո այն հանձնվում է Դատական դեպարտամենտի ղեկավարին կամ Դատական դեպարտամենտի՝ Խորհրդի կողմից լիազորված ներկայացուցչին (այսուհետ՝ Լիազոր ներկայացուցիչ):

4. Խորհրդի անդամները, Դատական դեպարտամենտի ղեկավարը, Լիազոր ներկայացուցիչը, ինչպես նաև մասնագիտացված կազմակերպության ղեկավարը կամ համապատասխան մասնագետները պարտավոր են չբացահայտել Քննության հարցերը մշակող մասնագետի (մասնագետների) անձը կամ մասնագիտացված կազմակերպությանը:

5. Գրավոր քննության հարցերի մշակումը չի կարող հանձնարարվել Խորհրդի անդամներին կամ Դատական դեպարտամենտին: Գրավոր քննության հարցերը մշակած անձինք չեն կարող մասնակցել այդ հարցերի հիման վրա իրականացված գրավոր քննության արդյունքների գնահատմանը:

6. Միևնույն մասնագիտացման ոլորտում նյութական իրավունքին և դատավարական իրավունքին առնչվող թեստային առաջադրանքների և իրավական խնդիրների մշակումը կարող է հանձնարարվել միևնույն մասնագետին (մասնագետներին) և մասնագիտական կազմակերպությանը:

7. Քննության թեստային առաջադրանքներ և իրավական խնդիրներ մշակողը պարտավոր է գաղտնի պահել դրանց բովանդակությունը և պատասխանները, ինչպես նաև որևէ այլ ձևով չնպաստել հավակնորդի կողմից Քննության հարցերին պատասխանելուն:

8. Եթե Քննության թեստային առաջադրանքների և իրավական խնդիրների մշակումը հանձնարարվել է մասնագիտացված կազմակերպությանը, դրանց գաղտնիությունն ապահովելու համար պատասխանատու է համապատասխան մասնագիտացված կազմակերպության ղեկավարը և այն մասնագետը, ով տվյալ կազմակերպության կողմից ներգրավվել է հարցերի մշակմանը:

9. Մասնագետը, որին հանձնարարվել է Քննության թեստային առաջադրանքների և իրավական խնդիրների մշակումը, պարտավոր է իրեն հանձնարարված աշխատանքը կատարել անձամբ: Աշխատանքի կատարմանն այլ անձանց ներգրավումն արգելվում է:

10. Եթե Քննության թեստային առաջադրանքների և իրավական խնդիրների մշակումը

հանձնարարվել է տարբեր մասնագետների, վերջիններս իրավունք չունեն բացահայտելու իրենց՝ որպես մասնագետ ընտրվելու փաստը, խորհրդակցելու միմյանց հետ կամ որևէ այլ կերպ միմյանց բացահայտելու հարցերի բովանդակությունը:

11. Քննության թեստային առաջադրանքներ և իրավական խնդիրներ մշակելու համար ընտրված մասնագետները կազմում են սույն կարգի Հավելված 1-ի 7-12-րդ կետերով նախատեսված պահանջներին համապատասխանող և սահմանված քանակությամբ թեստային առաջադրանքները, իրավական խնդիրները և ուղենիշային ճիշտ պատասխանները, որոնք քննության նախորդ օրը կրիչներով հանձնվում են Խորհրդի անդամին կամ անդամներին կամ Դատական դեպարտամենտի ղեկավարին կամ Լիազոր ներկայացուցչին: Նույն օրը Խորհրդի անդամի կամ անդամների կամ Դատական դեպարտամենտի ղեկավարի կամ Լիազոր ներկայացուցչի ներկայությամբ համակարգչային պատահական ընտրության եղանակով նշված թեստային առաջադրանքներից և իրավական խնդիրներից ձևավորվում են թվով 2 գրավոր առաջադրանքների տարբերակներ, որոնք առանձին-առանձին տեղադրվում են հատուկ կարգով որակավորման գրավոր քննությանը մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների թվին հավասար թվով ծրարների մեջ, որոնց մեջ տեղադրվում են նաև Դատական դեպարտամենտի կնիքով դրոշմված թղթեր՝ սևագրության և նշումներ կատարելու համար, ինչպես նաև գրիչ: Ծրարները փակվում, հատման կետում կնքվում են Խորհրդի և Դատական դեպարտամենտի կնիքներով, ստորագրվում են Խորհրդի անդամի կամ Լիազոր ներկայացուցչի կողմից: Պատրաստված գրավոր առաջադրանքների տարբերակներով ծրարները մինչև Քննության օրը պահվում են Բարձրագույն դատական խորհրդի նախագահի չհրկիզվող պահարանում: Բոլոր թեստային հարցերը և իրավական խնդիրները կրիչներով և ուղենիշային ճիշտ պատասխաններով Քննության օրը հանձնվում են Խորհրդի անդամներին, Դատական դեպարտամենտի ղեկավարին կամ Լիազոր ներկայացուցչին:

Հավելված 3
Բարձրագույն դատական խորհրդի
2026թ. ապրիլի 20-ի թիվ
ԲԴԽ-36-Ո-33 որոշման

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳՈՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ ՔՆՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ, ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻ, ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՄ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՑ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Հատուկ կարգով որակավորման գրավոր քննության (այսուհետ՝ Քննություն) անցկացման վայրը և ժամանակացույցը սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ):

2. Որակավորման գրավոր քննության անցկացնելու ժամանակի և վայրի մասին հայտարարությունը հրապարակվում է հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և դատական իշխանության պաշտոնական կայքում որակավորման գրավոր քննության օրվանից առնվազն 10 օր առաջ:

3. Քննության անցկացման վայրի և ժամանակի մասին Դատական դեպարտամենտն իրազեկում է հավակնորդին՝ ուղարկելով նաև էլեկտրոնային ծանուցում նրա՝ որակավորման ստուգմանը մասնակցելու համար ներկայացված հայտում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:

4. Յուրաքանչյուր հավակնորդ նախապես հայտարարված ժամին անձը հաստատող փաստաթղթով (անձը հաստատող փաստաթուղթ պետք է դիտարկել ՀՀ Կառավարության 22.12.1999թ. թիվ 767 որոշմամբ սահմանված փաստաթղթերը) ներկայանում է որակավորման քննության անցկացման վայր:

5. Ներկայացած հավակնորդների ինքնության ստուգումն ու գրանցումն իրականացնում է Լիազոր ներկայացուցիչը կամ նրա կողմից լիազորված Դատական դեպարտամենտի ներկայացուցիչները:

6. Անձը հաստատող փաստաթուղթ չներկայացրած, ինչպես նաև քննությունը սկսելուց հետո ներկայացած հավակնորդի մուտքը քննասենյակ արգելվում է:

7. Քննասենյակում քննության ընթացքը կազմակերպում են Լիազոր ներկայացուցիչը և նրա կողմից լիազորված Դատական դեպարտամենտի ներկայացուցիչները, որոնք կրում են անվանաքարտ: Վերջինս պետք է համապատասխանաբար պարունակի՝

1) «Բարձրագույն դատական խորհրդի լիազոր ներկայացուցիչ» կամ «Դատական դեպարտամենտ» բառերը,

2) Լիազոր ներկայացուցչի կամ նրա կողմից լիազորված Դեպարտամենտի ներկայացուցչի անունը և լուսանկարը,

3) Լիազոր ներկայացուցչի ստորագրությունը և Դատական դեպարտամենտի կնիքը:

8. Որակավորման գրավոր քննությանը կարող են ներկա լինել և դրանց ընթացքին հետևել արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարի (այսուհետ՝ Լիազոր մարմին) մեկ ներկայացուցիչ, փաստաբանների պալատի ներկայացուցիչ երկու փաստաբան և որակավորման գրավոր քննության անցկացումից առնվազն երեք աշխատանքային օր առաջ Բարձրագույն դատական խորհուրդ համապատասխան հայտ ներկայացրած՝ իրավունքի բնագավառում

գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների մինչև երեք ներկայացուցիչ՝ ըստ դիմումների ներկայացման ժամանակագրական առաջնահերթության, յուրաքանչյուր հասարակական կազմակերպությունից՝ մեկ ներկայացուցիչ (այսուհետ՝ «Դիտորդ»):

9. Հատուկ կարգով որակավորման գրավոր քննություն անցկացնելու օրվանից առնվազն 10 աշխատանքային օր առաջ Դատական դեպարտամենտը հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակում է հայտարարություն իրավունքի բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների կողմից Դիտորդի հավատարմագրման հայտ ներկայացնելու համար:

10. Հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Դիտորդի հավատարմագրման հայտը պետք է պարունակի հասարակական կազմակերպության անվանումը, ծանուցման հասցեն, հեռախոսահամարը, նշում՝ սույն կարգի պայմաններն ընդունելու վերաբերյալ, հայտը ներկայացնելու ամսաթիվը, առաջարկվող Դիտորդի անունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, ինչպես նաև Դիտորդի կողմից ստորագրված հայտարարություն այն մասին, որ համաձայնվել է սույն կարգի պայմաններին: Հայտին կցվում են նաև հասարակական կազմակերպության կանոնադրության պատճենը, առնվազն 3 տարվա գործունեությունը հավաստող փաստաթուղթ և առաջարկվող Դիտորդի լուսանկարը:

11. Դատական դեպարտամենտը մերժում է հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Դիտորդի հավատարմագրման հայտը, եթե՝

1) հասարակական կազմակերպությունը, ելնելով իր կանոնադրական նպատակներից և խնդիրներից, չի կարող իրականացնել իրավունքի բնագավառում գործունեություն.

2) չեն պահպանվել հայտին՝ սույն կարգով ներկայացվող պահանջները.

3) ըստ հայտերի ներկայացման ժամանակագրական առաջնահերթության հավատարմագրվել են այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչ Դիտորդներ, և տեղերը սպառվել են:

12. Դիտորդի կարգավիճակը հավաստելու համար վերջինիս տրվում է անվանաքարտ, որը պետք է պարունակի՝

1) «ԴԻՏՈՐԴ» բառը,

2) Դիտորդի անունը և լուսանկարը,

3) այն մարմնի կամ կազմակերպության անվանումը, որի ներկայացուցիչն է Դիտորդը.

4) Լիազոր ներկայացուցչի ստորագրությունը և Դատական դեպարտամենտի կնիքը:

13. Դիտորդն իրավունք ունի՝

1) ներկա գտնվել անմիջականորեն քննասենյակում և հետևել քննության ընթացքին,

2) Լիազոր ներկայացուցչին ներկայացնել իր դիտողությունները և (կամ) առաջարկությունները քննության հետ կապված ցանկացած հարցի վերաբերյալ,

3) կատարել սույն կարգով նախատեսված այլ գործողություններ:

14. Դիտորդն իրավունք չունի խոչընդոտել քննության բնականոն ընթացքին, այդ թվում՝ առանց Լիազոր ներկայացուցչի թույլտվության փաստաթղթեր կամ այլ նյութեր վերցնել,

ձայնագրել, տեսաձայնագրել կամ առցանց հեռարձակել քննության ամբողջ ընթացքը կամ դրա մասը, հաղորդակցվել հավակնորդների հետ: Սույն կետի պահանջները խախտելու դեպքում Լիազոր ներկայացուցիչն իրավասու է համապատասխան Դիտորդին հեռացնել քննասենյակից՝ այդ մասին կազմելով արձանագրություն: Արձանագրությունն ստորագրում են նաև քննասենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող առնվազն երկու անձ:

15. Դատական դեպարտամենտը Դիտորդներին ապահովում է քննության ընթացքին հետևելու համար անհրաժեշտ պայմաններով՝ այնպես, որ չխաթարվի դրա բնականոն ընթացքը:

16. Բացի Լիազոր ներկայացուցչից, նրա կողմից լիազորված Դեպարտամենտի ներկայացուցիչներից, Դիտորդներից և հավակնորդներից՝ այլ անձանց չի թույլատրվում ներկա գտնվել քննասենյակում:

17. Դատական դեպարտամենտն ապահովում է գրավոր քննության ամբողջ ընթացքի ուղիղ հեռարձակումը քննասենյակից դուրս գտնվող տարածքում, որտեղ քննության ընթացքին կարող է հետևել ցանկացած անձ՝ առանց տեսաձայնագրելու կամ առցանց հեռարձակելու հնարավորության: Սույն կետի պահանջները խախտելու դեպքում Լիազոր ներկայացուցիչն իրավասու է համապատասխան անձից պահանջել դադարեցնելու տեսաձայնագրմանը կամ առցանց հեռարձակմանն ուղղված գործողությունները, իսկ Լիազոր ներկայացուցչի պահանջին չենթարկվելու կամ այն կրկին խախտելու դեպքում՝ հեռացնել նրան համապատասխան տարածքից՝ այդ մասին կազմելով արձանագրություն: Արձանագրությունը ստորագրում են նաև քննասենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող առնվազն երկու անձ:

18. Քննության ողջ ընթացքը տեսաձայնագրվում է Դատական դեպարտամենտի կողմից: Տեսաձայնագրման համապատասխան կրիչը հավակնորդի հետ կապված վեճի դեպքում համարվելու է թույլատրելի ապացույց:

19. Լիազոր ներկայացուցիչն այնպես է կազմակերպում Քննությունը, որ հնարավորինս բացառվի գնահատող հանձնաժողովի կողմից հավակնորդներից յուրաքանչյուրի անձի և աշխատանքի նույնականացումը:

20. Լիազոր ներկայացուցչի կողմից գրանցված յուրաքանչյուր հավակնորդ զբաղեցնում է առանձին գրասեղան, որը որոշվում է վիճակահանությամբ՝ նախքան քննությունն սկսելը:

21. Քննության ժամանակ հավակնորդին չի թույլատրվում՝

1) քննասենյակ տանել որևէ նյութ, թուղթ, գրիչ, պայուսակ, հեռահաղորդակցման և համակարգչային սարքեր, այդ թվում՝ բջջային հեռախոս, ձայնագրիչներ, տեղեկատվության էլեկտրոնային կրիչներ կամ այլ տեխնիկական սարքավորումներ.

2) օգտագործել իրավական ակտեր՝ մեկնաբանության գրքեր, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, նախապես կազմված գրառումներ կամ այլ նյութեր, այդ թվում՝ այդպիսի տեղեկություններ պարունակող կամ տրամադրող ձայնային կամ այլ տեխնիկական միջոցներ ու սարքավորումներ, բացառությամբ սույն Որոշմամբ թույլատրված նյութերի.

3) քննասենյակում և դրա հարակից տարածքներում այլ հավակնորդի հետ խոսել կամ

ժեստերով և (կամ) որևէ այլ կերպ հաղորդակցվել.

4) ծխելը կամ ծխելու պատրվակով դուրս գալը.

5) քննության ընթացքում, բացի սանհանգույցից, այլ տարածք մուտք գործելը.

6) աշխատանքը հանձնելուց հետո քննասենյակում կամ անմիջապես հարակից տարածքներում մնալը:

22. Քննությունն սկսվելուց հետո հավակնորդը կարող է դուրս գալ քննասենյակից միայն Լիազոր ներկայացուցչի թույլտվությամբ, ով պարտավոր է ողջամիտ միջոցներ ձեռնարկել այլ անձանց հետ հավակնորդի շփումը բացառելու նպատակով:

23. Մինչև Քննությունն սկսելը հավակնորդներին տրամադրվում են Քննության համար անհրաժեշտ և սույն կարգով նախատեսված պարագաներ, ինչպես նաև խմելու ջուր:

24.Մինչև Քննությունն սկսելը Լիազոր ներկայացուցիչը հավակնորդներին համառոտ պարզաբանում է քննական գործընթացը, այդ թվում՝ Քննության տևողությունը, սույն կարգի 21-րդ, 22-րդ, 30-րդ, 33-րդ և 34-րդ կետերի պահանջները, քննական առաջադրանքների տարբերակները որոշելու նպատակով վիճակահանության անցկացման կարգը, ինչպես նաև հաղորդում է Քննությունը պատշաճ ձևով հանձնելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

25. Սույն կարգի 24-րդ կետով նախատեսված գործողությունները կատարելուց հետո Լիազոր ներկայացուցիչը քննական առաջադրանքների տարբերակներով ծրարները՝ փակված (զմռսված) վիճակում և ծրարների վրա անխախտ կնիքների և ստորագրությունների առկայությամբ, բաշխելու նպատակով առաջարկում է, որպեսզի հավակնորդներից մեկը փակ ծրարները պատահականության սկզբունքով բաժանի քննասենյակում գտնվող հավակնորդներին:

26. Յուրաքանչյուր հավակնորդ ստանում է ծրար, որը պարունակում է՝

1) համապատասխան թեստային առաջադրանքի (քննական հարցերի) թղթային տարբերակը,

2) Դատական դեպարտամենտի կնիքով դրոշմված թղթեր՝ սևագրություն և նշումներ կատարելու համար,

3) գրիչ:

27. Քննության իրավական խնդրի տարբերակը հավակնորդին տրամադրելուց հետո, վերջինիս տրամադրված իրավական խնդիրների հարցերին պատասխանելու համար տրամադրվում են անհրաժեշտ այլ նյութեր, որոնց շրջանակը որոշում է (են) Խորհրդի կողմից ընտրված քննական հարցերը մշակած համապատասխան մասնագետը (մասնագետները) կամ մասնագիտացված կազմակերպությունը:

28. Կազմակերպչական գործողություններն իրականացնելուց հետո Լիազոր ներկայացուցիչը հայտարարում է քննությունը սկսված: Քննության ժամանակը սկսվում է հաշվարկվել այդ պահից:

29. Քննության տևողությունը սահմանվում է 6 ժամ, որից թեստային առաջադրանքների լուծման համար տրամադրվում է 2 ժամ, իսկ իրավական խնդիրներին պատասխանելու համար՝ 4 ժամ: Հավակնորդի անձի կամ Քննության ընթացքի հետ կապված արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքներ ի հայտ գալու դեպքում Լիազոր ներկայացուցիչը, կազմելով համապատասխան արձանագրություն, այդ

հանգամանքների տևողության չափով երկարաձգում է Քննության համար նախատեսված ժամկետը քննասենյակում ներկա համապատասխանաբար բոլոր կամ առանձին հավակնորդների համար: Արձանագրությունը ստորագրում են նաև քննասենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող առնվազն երկու անձ:

30. Թեստային առաջադրանքում առաջարկված 4 պատասխաններից ընտրվում է միայն մեկ տարբերակ և դրա դիմաց գտնվող վանդակում հավակնորդի կողմից կատարվում է **«X»** նշում: Իրավական խնդիրների հարցերի պատասխանները շարադրվում են ձեռագիր կամ համակարգչով՝ Microsoft Word ծրագրի միջոցով՝ պահպանելով փաստաթղթի հետևյալ ձևաչափը՝

1) տառատեսակը՝ GHEA Grapalat.
2) տառաչափը՝ 12.
3) տողերի հեռավորությունը՝ 1,15 սմ.
4) լուսանցքները՝ վերևից՝ 2 սմ, ներքևից՝ 2 սմ, աջից՝ 3 սմ, ձախից՝ 1,5 սմ.
5) նոր պարբերության խորությունը՝ 1 սմ.
6) էջերը՝ համարակալված 1-ից, էջի ստորին կենտրոնական մասում.
7) քննական հարցերի պատասխանների հաջորդականությունը՝ նախ՝ նյութական իրավունքին, ապա՝ դատավարական իրավունքին վերաբերող քննական հարցերը, յուրաքանչյուրը նոր էջից.
8) հարցադրումներին պատասխանելու հաջորդականությունը՝ ըստ առաջադրանքի:

31. Եթե քննասենյակում քննության ընթացքը կազմակերպող անձի կամ Դիտորդի մոտ հիմնավոր կասկած է առաջանում, որ հավակնորդն իր մոտ թաքցնում է սույն կարգի 21-րդ կետում նշված որևէ արգելված նյութ (առարկա), ապա Դիտորդը կամ Դատական դեպարտամենտի ներկայացուցիչը կարող է հրավիրել Լիազոր ներկայացուցչին, որը պարտավոր է հավակնորդից պահանջել ցույց տալու իր գրպանի կամ հագուստի այլ մասի (թաքստոցի) պարունակությունը: Եթե հավակնորդը հրաժարվում է ցույց տալ իր գրպանի կամ հագուստի այլ մասի (թաքստոցի) պարունակությունը կամ ցույց է տալիս սույն կարգի 211-րդ կետում նշված որևէ արգելված նյութ (առարկա), ապա տվյալ փաստն արձանագրվում է Լիազոր ներկայացուցչի կողմից, իսկ հավակնորդը հեռացվում է քննասենյակից: Արձանագրությունը ստորագրում են նաև քննասենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող առնվազն երկու անձ:

32. Հավակնորդի ցանկությամբ գրպանի կամ հագուստի այլ մասի (թաքստոցի) պարունակությունը կարող է ցույց տրվել նույն սեռի առնվազն երկու անձի (Դիտորդի և (կամ) Դատական դեպարտամենտի ներկայացուցչի) ներկայությամբ՝ առանձին սենյակում:

33. Հավակնորդներին արգելվում է գրավոր աշխատանքում գրել իրենց անունը կամ կատարել որևէ այլ նշում, որը կարող է անհատականացնել գրավոր աշխատանքը, իսկ հարցը սխալ նշելու հետևանքով կատարված ջնջումի դեպքում տվյալ հարցը միավոր չի ստանում:

34. Աշխատանքն անհատականացնող նշան է համարվում հավակնորդի կողմից պատասխանի ընտրված տարբերակի դիմաց գտնվող վանդակում **«X»** նշումից բացի որևէ այլ նշում, ինչպես նաև այդ նշումն այլ հարցերի պատասխանների տարբերակների

համեմատ ակնհայտորեն տարբերակվող ձևով կատարելը: Ի թիվս այլնի նաև՝ Կարգի 30-րդ կետի պահանջները խախտելը, շարադրանքում որևէ եղանակով բառերի համակարգչային ընդգծումը (մգեցում, շեղատառ, ընդգծում, խոշոր կամ այլ տառատեսակների կիրառում և այլն), շարադրանքի հետ առնչություն չունեցող բառեր, տառեր կամ թվեր օգտագործելը, միմյանց հաջորդող կրկնվող բառեր, տառեր, կետադրական նշաններ օգտագործելը, իրավական ակտերի անվանումների անթույլատրելի կրճատումներ կատարելը կամ հապավումներ կիրառելը, «հոդված», «մաս», «կետ», «ենթակետ» բառերի կրճատումները, ծալված կամ ջրի, թանաքի կամ այլ նյութերի հետքեր պարունակող աշխատանք հանձնելը:

35. Քննության համար հատկացված ժամանակն ավարտվելուց, ինչպես նաև աշխատանքն ավարտելուց հետո հավակնորդը պարտավոր է սույն կարգի 36-րդ կետով սահմանված կարգով աշխատանքն անմիջապես հանձնել Լիազոր ներկայացուցչին:

36. Աշխատանքը Լիազոր ներկայացուցչին հանձնելուց հետո վերջինս աշխատանքը լուսապատճենահանում է և էլեկտրոնային ֆայլը պահպանում համակարգչում, որից հետո համակարգչից տպիչի միջոցով տպվում է աշխատանքի լուսապատճենահանված (կրկնօրինակ) տարբերակը, որի վրա հավակնորդը գրում է իր անունը և ստորագրում բոլոր էջերը: Դատական դեպարտամենտի ներկայացուցիչն աշխատանքի բնօրինակ տարբերակի առաջին էջի վրա փակցնում է մտապահելու հնարավորությունը բացառող համապատասխան ծածկագիր: Այնուհետև, Դատական դեպարտամենտի ներկայացուցիչն աշխատանքի բնօրինակ տարբերակը տեղադրում է ծրարի մեջ և փակում ծրարը՝ հատման կետում ծրարի վրա փակցնելով մտապահելու հնարավորությունը բացառող համապատասխան ծածկագիր: Այնուհետև դեպարտամենտի ներկայացուցիչը մտապահելու հնարավորությունը բացառող ծածկագիր է փակցնում Հավակնորդի ստորագրած աշխատանքի կրկնօրինակ տարբերակի առաջին և վերջին էջերի վրա: Հավակնորդն իր կողմից ստորագրված կրկնօրինակը ծալելուց հետո այն տեղադրում է թափանցիկ և կնքված արկղի մեջ: Նշված արկղի բացվող հատվածը ստորագրվում է Լիազոր ներկայացուցչի և ցանկացող Դիտորդների և հավակնորդների կողմից: Լիազոր ներկայացուցիչը ծածկագրերին համապատասխանող ունկնդիրների ցուցակը տեղադրում է նշված արկղի մեջ: Սույն կետում նշված արկղը թույլատրվում է բացել քննության արդյունքները հրապարակելիս:

37. Քննության ընթացքում հավակնորդի կատարած սևագրության էջերը չեն հանձնվում: Դատական դեպարտամենտի կնիքով դրոշմված չօգտագործված թղթերը հանձնվում են Դատական դեպարտամենտի ներկայացուցչին:

38. Հավակնորդի կողմից սույն Կարգի 34-րդ կետի պահանջները խախտելու դեպքում աշխատանքը, գնահատման հանձնաժողովի առնվազն 2 ձայնով ընդունված որոշմամբ, գնահատվում է 0 միավոր:

39. Հավակնորդի կողմից սույն կարգի պահանջների խախտում թույլ տալու դեպքում խախտման փաստն արձանագրվում է Լիազոր ներկայացուցչի կողմից, իսկ հավակնորդը հեռացվում է քննասենյակից: Արձանագրությունը ստորագրում են նաև քննասենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող առնվազն երկու անձ: Այդ դեպքում համարվում է, որ

հավակնորդը չի մասնակցել քննությանը:

Հավելված 4
Բարձրագույն դատական խորհրդի
2026թ. ապրիլի 20-ի թիվ
ԲԴԽ-36-Ո-33 որոշման

ՔՆՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՍՏՈՒԳԵԼՈՒ ԵՎ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿԸ, ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳՈՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՆՎԱՃԱԳՈՒՅՆ ԱՆՑՈՂԻԿ ՄԻԱՎՈՐԸ, ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

Ի.ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳԱՂՏՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

1. Հատուկ կարգով որակավորման գրավոր քննության (այսուհետ՝ Քննություն) աշխատանքները ստուգելու և գնահատելու նպատակով քննություն անցկացնելու օրը՝ քննության ավարտից անմիջապես հետո, Բարձրագույն դատական խորհրդի դռնփակ նիստում վիճակահանությամբ ձևավորվում է Գնահատման հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվում են քրեական մասնագիտացում ունեցող հինգ դատավոր և իրավունքի համապատասխան բնագավառի երկու իրավաբան գիտնական:

2. Գնահատման հանձնաժողովի կազմում չեն կարող ընդգրկվել Բարձրագույն դատական խորհրդի անդամները, Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի պալատի նախագահները և Ընդհանուր ժողովի հաձնաժողովների անդամները:

3. Գնահատման հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար Քննություն անցկացնելուց ոչ շուտ, քան չորս օր առաջ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 104-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով ձևավորվում է գնահատման հանձնաժողովի կազմում ընդգրկվելիք թեկնածուների կազմը:

4. Քննություն անցկացնելու օրը՝ քննության ավարտից անմիջապես հետո, սույն Կարգի 3-րդ կետով սահմանված կարգով ներկայացված դատավորներից և իրավաբան գիտնականներից Բարձրագույն դատական խորհրդի կողմից վիճակահանությամբ ընտրվում են Գնահատման հանձնաժողովի անդամները:

5. Մինչև Քննության արդյունքների հրապարակումը Գնահատման հանձնաժողովի անդամների անունները ենթակա չեն հրապարակման:

6. Գնահատման հանձնաժողովի աշխատանքն իրականացվում է գաղտնի և դռնփակ ընթացակարգով:

7. Գնահատման հանձնաժողովի նախագահն ընտրվում է հանձնաժողովի կազմից՝ անդամների ձայների մեծամասնությամբ:

8. Գնահատման հանձնաժողովի աշխատանքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու նպատակով հանձնաժողովին տրամադրվում է առանձնասենյակ, որը պետք է կահավորված լինի նաև չհրկիզվող պահարանով՝ գրավոր աշխատանքներն այնտեղ պահելու նպատակով:

9. Բացառությամբ Գնահատման հանձնաժողովի աշխատանքային պայմաններն

ապահովող Դատական դեպարտամենտի համապատասխան աշխատակիցների՝ այլ անձանց մուտքն այն սենյակ, որտեղ աշխատում է Գնահատման հանձնաժողովը, արգելվում է:

10. Հավակնորդների գրավոր աշխատանքները Գնահատման հանձնաժողովին տրամադրվում են անանուն՝ ծածկագրված (ապանձնավորված) վիճակում:

11. Քննության արդյունքների ամփոփման նպատակով գրավոր աշխատանքների ապածածկագրումը (անհատականացումը) կարող է իրականացվել տվյալ մասնագիտացման բոլոր հավակնորդների աշխատանքների գնահատումն ավարտելուց հետո:

12. Գնահատման հանձնաժողովի գործունեությունը դադարում է Քննության արդյունքներն ամփոփելու ժամկետը լրանալուց հետո:

II. ՔՆՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՍՏՈՒԳԵԼՈՒ ԵՎ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿԸ

1. Գրավոր բոլոր աշխատանքների ստուգումն իրականացնում են Գնահատման հանձնաժողովի բոլոր անդամները՝ ստուգման արդյունքներով առանձին-առանձին լրացնելով Խորհրդի կողմից հաստատված համապատասխան ձևի ստուգաթերթը:

2. Գրավոր աշխատանքների ստուգման և գնահատման համար Լիազոր ներկայացուցչի կողմից Գնահատման հանձնաժողովին տրամադրվում են թեստային առաջադրանքների և իրավական խնդիրների ուղենիշային ճիշտ պատասխանները:

3. Ստուգողի կողմից թեստային առաջադրանքի յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր: Յուրաքանչյուր ստուգողի կողմից ստուգվում են բոլոր գրավոր աշխատանքները:

4. Գնահատման հանձնաժողովի անդամները չպետք է գնահատման ընթացքում միմյանց հետ քննարկեն գրավոր քննության աշխատանքին տրվող գնահատականները և դրանց հիմնավորումները:

5. Քննության իրավական խնդիրներում ներառված քննական հարցերից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 5 միավոր: Ընդ որում, առաջադրված հարցադրումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 1 միավոր՝ հետևյալ սանդղակով (միավորների քայլը՝ 1).

ՉԱՓՈՐՈՇԻՉԸ	Առավելագույն միավորը
Իրավական գիտելիքներ մասնագիտացման ոլորտում (իրավական նորմերի ճիշտ ընտրություն, բովանդակության բացահայտում և կիրառելիության հիմնավորում, դրանց կապակցությամբ ՄԻԵԴ-ի, Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշման ներկայացում)	**1,5**
Վերլուծական և մեկնաբանման հմտություններ (խնդրի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների վերհանում, դրանց	**1,5**

համադրում կիրառելի իրավական նորմի և ներկայացված դիրքորոշումների հետ)	
Վերլուծությունից բխող եզրակացություն	1
Իրավաբանական գրավոր խոսքի հստակություն և տրամաբանական սահունություն	1

6. Ստուգողի կողմից քննական հարցի համար նշանակված հավակնորդի միավորը որոշվում է բոլոր հարցադրումների համար ստացած միավորների հանրագումարով:

7. Գրավոր աշխատանքները ստուգելուց հետո գնահատման հանձնաժողովի անդամներն իրականացնում են քննության արդյունքների ամփոփիչ հաշվարկ:

8. Քննական հարցերի համար հավակնորդի հանրագումարային վերջնական գնահատականը որոշում է դրանց համար հավակնորդի ստացած միավորների հանրագումարով:

9. Ստուգված գրավոր աշխատանքին կցվում է ստուգողի կողմից լրացված ստուգաթերթը, որը պետք է պարունակի նշում հավակնորդի կողմից ստացած միավորի մասին:

10. Խորհրդի որոշմամբ սահմանված՝ «Որակավորման գրավոր քննության կազմակերպման և անցկացման կարգ»-ի պահանջների խախտման փաստ հայտնաբերելու դեպքում աշխատանքը, Գնահատման հանձնաժողովի առնվազն 2 ձայնով ընդունված որոշմամբ, գնահատվում է 0 միավոր: Եթե Գնահատման հանձնաժողովն անհրաժեշտ ձայներով որոշում չի կայացնում սույն կետով սահմանված հիմքով աշխատանքը զրո միավոր գնահատելու վերաբերյալ, ապա այն գնահատվում է ընդհանուր հիմունքներով:

11. Քննության արդյունքներն ամփոփելուց հետո կազմվում է Գնահատման հանձնաժողովի արձանագրություն, որը պետք է պարունակի տեղեկություններ յուրաքանչյուր քննական հարցի համար հավակնորդների ստացած միավորների և դրանց հանրագումարի մասին: Արձանագրությունը ստորագրում են Գնահատման հանձնաժողովի բոլոր անդամները:

12. Գրավոր աշխատանքների ստուգումը, գնահատումը և ամփոփումն ավարտելուց հետո Գնահատման հանձնաժողովի արձանագրությունը՝ գրավոր աշխատանքների և այլ փաստաթղթերի հետ, տրամադրվում են Լիազորված ներկայացուցչին:

13. Քննությունից հավակնորդի ստացած վերջնական գնահատականը հրապարակելիս հրապարակվում են նաև յուրաքանչյուր քննական հարցի համար հավակնորդի ստացած միավորները:

14. Դատական դեպարտամենտը «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 105-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գրավոր քննության արդյունքների հրապարակումից հետո քննություն հանձնած անձի դիմումի հիման վրա անհապաղ, բայց ոչ ուշ, քան դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող օրը տրամադրում է հավակնորդի գրավոր աշխատանքի պատճենը, ինչպես նաև՝ ուղենիշային ճիշտ պատասխանները, գրավոր քննության ողջ ընթացքի տեսաձայնագրության կրկնօրինակը, գնահատման հանձնաժողովի արձանագրության համապատասխան քաղվածքը և Քննության արդյունքով հավակնորդի ստուգված աշխատանքի և

ստուգաթերթերի պատճենները:

III. ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳՈՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՆՑՈՂԻԿ ՄԻԱՎՈՐԸ

1. Թեստային առաջադրանքների և իրավական խնդիրների հանրագումարային արդյունքներով նվազագույն անցողիկ միավոր է համարվում 80-ը

IV. ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Գրավոր քննության արդյունքները կարող են բողոքարկվել Բողոքարկման հանձնաժողով՝ դրանք հրապարակելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում:
2. Քննության վերաբերյալ բողոքները ստուգելու և գնահատելու նպատակով՝ տվյալ մասնագիտացմամբ քննության արդյունքների դեմ առաջին բողոքն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում: «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 105.1-րդ հոդվածի 2-րդ մասով ահմանված կարգով առաջարկված թեկնածուներից Բարձրագույն դատական խորհրդի վիճակահանությամբ ձևավորվում է քրեական մասնագիտացում ունեցող երկու դատավորի և մեկ իրավաբան գիտնականի կազմով Բողոքարկման հանձնաժողով:
3. Գնահատման հանձնաժողովի անդամները չեն կարող ընդգրկվել Բողոքարկման հանձնաժողովի կազմում:
4. Մինչև Քննության բողոքարկման արդյունքների հրապարակումը Բողոքարկման հանձնաժողովի անդամների անունները ենթակա չեն հրապարակման:
5. Բողոքարկման հանձնաժողովի կազմում ընդգրկվելու, հանձնաժողովի աշխատանքն իրականացնելու կարգի, հանձնաժողովի անդամների վարձատրության, նրանց լիազորությունների դադարեցման, ինչպես նաև հանձնաժողովի գործունեության դադարման նկատմամբ կիրառվում են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 104-րդ հոդվածով, իսկ բողոքարկման արդյունքների վերանայման նկատմամբ՝ նույն օրենքի 105-րդ հոդվածով սահմանված դրույթները:
6. Բողոքարկվող դիմումներով և գրավոր աշխատանքներով ծրարները հանձնվում են Լիազոր ներկայացուցչին՝ ծածկագրման աշխատանքները կազմակերպելու և Բողոքարկման հանձնաժողովին փոխանցելու համար:
7. Հավակնորդի գրավոր աշխատանքը և բողոքը Բողոքարկման հանձնաժողովին տրամադրվում են անանուն՝ ծածկագրված (ապանձնավորված) վիճակում:
8. Բողոքարկման աշխատանքն իրականացվում է գաղտնի և դռնփակ ընթացակարգով: Բողոքարկման հանձնաժողովի աշխատանքային պայմաններն ապահովում է Դատական դեպարտամենտը:

9. Բողոքարկման հանձնաժողովը գրավոր աշխատանքը վերստուգում է միայն բողոքարկման դիմումի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

10. Բողոքարկման հանձնաժողովը բողոքը քննում և դրա վերաբերյալ կայացնում է որոշում բողոքարկման համար սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Բողոքարկման հանձնաժողովը կարող է քննության արդյունքների դեմ բերված բողոքը մերժել կամ բավարարել՝ մասնակի կամ ամբողջությամբ:

11. Բողոքարկման արդյունքներով կայացված որոշումները պատճառաբանվում են: Դրանք անհապաղ հրապարակվում են դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում՝ նշելով սկզբնական և բողոքարկման արդյունքում ստացված միավորները:

12. Գրավոր քննության արդյունքները դատական կարգով կարող են բողոքարկվել ընթացակարգային խախտումների հիմքով, եթե դրանք բողոքարկվել են Բողոքարկման հանձնաժողով:

Հավելված 5
Բարձրագույն դատական խորհրդի
2026թ. ապրիլի 20-ի թիվ
ԲԴԽ-36-Ո-33 որոշման

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳՈՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻ ՁԵՎԸ

Հանձնաժողովի անդամ _____
անուն, հայրանուն, ազգանուն

Աշխատանքի ծածկագիրը _____

Ստուգման ամսաթիվը _____

Քրեական իրավունք և քրեական դատավարություն	*Առավելագույն միավոր*	*Հավակնորդի միավոր*
Հարց 1	(1)	
Հարց 2	(1)	
Հարց 3	(1)	
Հարց 4	(1)	
Հարց 5	(1)	
Հարց 6	(1)	
Հարց 7	(1)	

Հարց 8	(1)	
Հարց 9	(1)	
Հարց 10	(1)	
Հարց 11	(1)	
Հարց 12	(1)	
Հարց 13	(1)	
Հարց 14	(1)	
Հարց 15	(1)	
Հարց 16	(1)	
Հարց 17	(1)	
Հարց 18	(1)	
Հարց 19	(1)	
Հարց 20	(1)	
Հարց 21	(1)	
Հարց 22	(1)	
Հարց 23	(1)	
Հարց 24	(1)	
Հարց 25	(1)	
Հարց 26	(1)	
Հարց 27	(1)	
Հարց 28	(1)	
Հարց 29	(1)	
Հարց 30	(1)	
Հարց 31	(1)	
Հարց 32	(1)	
Հարց 33	(1)	
Հարց 34	(1)	
Հարց 35	(1)	
Հարց 36	(1)	
Հարց 37	(1)	
Հարց 38	(1)	
Հարց 39	(1)	
Հարց 40	(1)	
Հարց 41	(1)	
Հարց 42	(1)	

Հարց 43	(1)	
Հարց 44	(1)	
Հարց 45	(1)	
Հարց 46	(1)	
Հարց 47	(1)	
Հարց 48	(1)	
Հարց 49	(1)	
Հարց 50	(1)	
Հարց 51	(1)	
Հարց 52	(1)	
Հարց 53	(1)	
Հարց 54	(1)	
Հարց 55	(1)	
Հարց 56	(1)	
Հարց 57	(1)	
Հարց 58	(1)	
Հարց 59	(1)	
Հարց 60	(1)	
Ընդամենը		

Հանձնաժողովի անդամ

_____

(ստորագրություն)

ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐ

	Մասնագիտացման ոլորտում իրավական գիտելիքներ		**Վերլուծական և մեկնաբանման հմտություններ**		**Կատարված վերլուծությունից բխող եզրակացություն**		**Իրավաբանական գրավոր խոսքի հստակություն և տրամաբանական սահունություն**	
	Առավելագույն միավոր	*Հավակնորդի միավոր*	*Առավելագույն միավոր*	*Հավակնորդի միավոր*	*Առավելագույն միավոր*	*Հավակնորդի միավոր*	*Առավելագույն միավոր*	*Հավակնորդի միավոր*
Հարց 1	(1.5)		(1.5)		(1)		(1)	
Հարց 2	(1.5)		(1.5)		(1)		(1)	
Հարց 3	(1.5)		(1.5)		(1)		(1)	
Հարց 4	(1.5)		(1.5)		(1)		(1)	
Հարց 5	(1.5)		(1.5)		(1)		(1)	
Հարց 6	(1.5)		(1.5)		(1)		(1)	
Հարց 7	(1.5)		(1.5)		(1)		(1)	
Հարց 8	(1.5)		(1.5)		(1)		(1)	
Ընդամենը								

Նշումներ, մեկնաբանություններ	
Հարց 1	
Հարց 2	

Հարց 3	
Հարց 4	
Հարց 5	
Հարց 6	
Հարց 7	

Հարց 8	

Հանձնաժողովի անդամ _____

ստորագրություն

Հավելված 6
Բարձրագույն դատական խորհրդի
2026թ. ապրիլի 20-ի թիվ
ԲԴԽ-36-Ո-33 որոշման

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳՈՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻ ՁԵՎԸ

Հանձնաժողովի անդամ _____
անուն, հայրանուն, ազգանուն

Աշխատանքի ծածկագիրը _____

ստուգման ամսաթիվը _____

Քրեական իրավունք և քրեական դատավարություն	*Առավելագույն միավոր*	*Հավակնորդի միավոր*
Հարց 1	(1)	
Հարց 2	(1)	
Հարց 3	(1)	
Հարց 4	(1)	

Հարց 5	(1)	
Հարց 6	(1)	
Հարց 7	(1)	
Հարց 8	(1)	
Հարց 9	(1)	
Հարց 10	(1)	
Հարց 11	(1)	
Հարց 12	(1)	
Հարց 13	(1)	
Հարց 14	(1)	
Հարց 15	(1)	
Հարց 16	(1)	
Հարց 17	(1)	
Հարց 18	(1)	
Հարց 19	(1)	
Հարց 20	(1)	
Հարց 21	(1)	
Հարց 22	(1)	
Հարց 23	(1)	
Հարց 24	(1)	
Հարց 25	(1)	
Հարց 26	(1)	
Հարց 27	(1)	
Հարց 28	(1)	
Հարց 29	(1)	
Հարց 30	(1)	
Հարց 31	(1)	
Հարց 32	(1)	
Հարց 33	(1)	
Հարց 34	(1)	
Հարց 35	(1)	
Հարց 36	(1)	
Հարց 37	(1)	
Հարց 38	(1)	
Հարց 39	(1)	

Հարց 40	(1)	
Հարց 41	(1)	
Հարց 42	(1)	
Հարց 43	(1)	
Հարց 44	(1)	
Հարց 45	(1)	
Հարց 46	(1)	
Հարց 47	(1)	
Հարց 48	(1)	
Հարց 49	(1)	
Հարց 50	(1)	
Հարց 51	(1)	
Հարց 52	(1)	
Հարց 53	(1)	
Հարց 54	(1)	
Հարց 55	(1)	
Հարց 56	(1)	
Հարց 57	(1)	
Հարց 58	(1)	
Հարց 59	(1)	
Հարց 60	(1)	
Ընդամենը		

Հանձնաժողովի անդամ

_____

(ստորագրություն)

ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐ

	Մասնագիտացման ոլորտում իրավական գիտելիքներ		**Վերլուծական և մեկնաբանման հմտություններ**		**Կատարված վերլուծությունից բխող եզրակացություն**		**Իրավաբանական գրավոր խոսքի հստակություն և տրամաբանական սահունություն**	
	Առավելագույն միավոր	*Հավակնորդի միավոր*	*Առավելագույն միավոր*	*Հավակնորդի միավոր*	*Առավելագույն միավոր*	*Հավակնորդի միավոր*	*Առավելագույն միավոր*	*Հավակնորդի միավոր*
Հարց 1	(1.5)		(1.5)		(1)		(1)	
Հարց 2	(1.5)		(1.5)		(1)		(1)	
Հարց 3	(1.5)		(1.5)		(1)		(1)	
Հարց 4	(1.5)		(1.5)		(1)		(1)	
Հարց 5	(1.5)		(1.5)		(1)		(1)	
Հարց 6	(1.5)		(1.5)		(1)		(1)	
Հարց 7	(1.5)		(1.5)		(1)		(1)	
Հարց 8	(1.5)		(1.5)		(1)		(1)	
Ընդամենը								

Նշումներ, մեկնաբանություններ	
Հարց 1	

Հարց 2	
Հարց 3	
Հարց 4	
Հարց 5	
Հարց 6	

Հարց 7	
Հարց 8	

Հանձնաժողովի անդամ _____

ստորագրություն